

Ինչպես շարունակել հավատքի մեջ

Հավատքի Դասեր (Մաս 7)

«Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին...բայց այնպես որ մարդս չի կարող ըմբռնել Աստծո արած գործքը գլխից մինչև ծայր» Ժողովող 3:11

Ինչպես շարունակել հավատքի մեջ
երբ սպասում ենք Աստծոն
Հռոմեացիներին. 4:17-20

1- Ընթրնի հավատքի վեց փուլերը

1- Երազանք (75 տարեկան հասակում)

«Ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ...» Ծննդոց 12-1-3

2- Որոշում

«Աբրահամը գնաց ինչպես Եհովան նրան ասել էր»
Ծննդոց 12:4

3- Հետաձգում (86 տարեկան հասակում)

«Եվ Աբրահամի կինը Սարան չէր ծնում նրա համար»
Ծննդոց 16:1

4- Դժվարություն (99 տարեկան հասակում)

«Արդյոք հարյուր տարեկան մարդին զավակ կլինի...»
Ծննդոց 17:17

5- Փակուղի

«Առ քո սիրած մեկ հատիկ որդիդ...նրան ողջակեզ արա»
Ծննդոց 21:1-6, 22:1-12

6- Ազատագրություն

«Ձեռքդ տղային մի դպցնիր, և նրան մի բան մի անիր...ահա մի խոյ կար ետևին մացառներումը» Ծննդոց 22:12,13

2- Հիշիր Աստված ինչ է կարող անել

«Աբրահամը...հավատաց նրան, որ մեռելներին կենդանի է անում և չի նող բաները յինողի պես է կանչում» Հռոմեացիներին 4:17

«Այն բաները որ կարելի չեն մարդկանց մոտ, կարելի են Աստծո մոտ:» Դուկաս 18:27

3- Հենվիր Աստծո խոստումներին

«Առանց հույսի հույսով հավատաց ինչպես ասվեցավ որ շատ ազգերի հայր պիտի լինի» Հռոմեացիներին 4:18

«Հավատքով Աբրահամը Իսահակին պատարագ մատուցրեց երբոր փորձվեցավ...նա որ խոստմունքը ընդունել էր:» Եբրայեցիներին 11:17

4- Ընդունիր իրականությունը հավատքով

«Չ'տկարացավ հավատքով, այսինքն մտիկ չարավ իր մարմնին որ մեռած էր ...ոչ էլ Սառայի արգանդի մեռած լինելուն:» Հռոմեացիներին 4:19-20

5- Ուրախացիր սպասողության ընթացքին

«Աստծո խոստմունքի համար չ'երկմտեց անհավատությունով, այլ զորացավ հավատքով և Աստծոն փառք տվավ, և իր մտքում համոզված էր թե նա որ խոստացավ կարող է և անել» Հռոմեացիներին 4:20-21

«Հույսով ուրախագեթ, նեղության համբերեցեթ, աղոթքում հարատևեցեթ» Հռոմեացիներին 12:12

Երեք տեսակ ազատագրություն

- Հանգամանքային
- Անձնական
- Վերջնական (Երկինք)

«...պարծենում ենք Աստծո փառքի հույսովը:»
Հռոմեացիներին 5:2

«Քո հավատքի հաղորդակցությունը պտղաբեր լինի:»
Փիլիմոն 1:6